

1.2.2. *Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2005թ. հունվար-նոյեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 409.0 մլրդ.դրամ, որը 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը գերազանցել է 10.9%-ով: 2005թ. նոյեմբերի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է 2005թ. հոկտեմբերի 55.1%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 263384.7 մլն դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 15.6%-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 145590.6 մլն դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը 3.4 %-ով:

Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը հիմնականում պայմանավորված է պտղի և հատապտղի, խաղողի, բանջարանոցային, բոստանային ու կերային մշակաբույսերի համախառն բերքի ծավալների ավելացմամբ: Պտղի և հատապտղի համախառն բերքն ավելացել է 208.9 հազ. տոննայով կամ շուրջ 3.0 անգամ, խաղողինը՝ 14.6 հազ. տոննայով կամ 9.9 %-ով, բանջարանոցային՝ 44.2 հազ. տոննայով կամ 7.4 %-ով, կերային (կուտակված խոտինը)՝ 22.0 հազ. տոննայով կամ 2.1 %-ով և բոստանային մշակաբույսերինը 2.2 հազ. տոննայով կամ 1.9 %-ով: Միաժամանակ, նվազել են հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերի ու կարտոֆիլի արտադրության ծավալները: Համապատասխանաբար, հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերինը՝ 68.0 հազ. տոննայով կամ 14.9 %-ով, կարտոֆիլինը՝ 22.0 հազ. տոննայով կամ 3.9 %-ով:

Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2005թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբեր 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2005թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբեր 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %	2005թ. հունվար-նոյեմբեր	2005թ. հունվար-նոյեմբեր 2004թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ, %
ք.Երևան	0.4	100.0	3.5	102.9	36.0	85.7
Արագածոտն	9.1	104.6	66.8	106.5	25.6	98.8
Արարատ	7.5	105.6	43.3	106.9	40.1	102.3
Արմավիր	9.4	109.3	37.5	106.8	38.3	101.6
Գեղարքունիք	13.2	105.6	103.1	106.5	40.6	104.6
Լոռի	8.4	105.0	68.1	106.4	25.9	92.8
Կոտայք	9.5	117.3	59.6	107.4	186.1	80.2
Շիրակ	11.6	105.5	86.5	106.4	37.7	104.7
Սյունիք	6.6	98.5	49.1	106.5	14.5	104.3
Վայոց ձոր	2.9	103.6	21.9	106.8	12.1	102.5
Տավուշ	6.3	105.0	39.8	106.7	20.3	104.6
Ընդամենը ՀՀ	84.9	106.3	579.2	106.6	477.2	91.0

¹ Ներառյալ ներքին սպառումը:

2005թ. հունվար-նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, անասնաբուժական հիմնական մթերքի արտադրության ծավալները՝ բացառությամբ ձվի ծավալից, ավելացել են: Այսպես՝ սպանդի համար իրացված անասունի և թռչնի ծավալը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 5.0 հազ. տոննայով, կամ 6.3 %-ով, կաթինը՝ 36.0 հազ. տոննայով կամ 6.6 %-ով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը 2005թ. հուլիս-սեպտեմբերին գյուղատնտեսության ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 201 գյուղական համայնքների 7638 գյուղացիական տնտեսություններում անց է կացրել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն: Հետազոտված տնտեսություններում բերքահավաքի ընթացքում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններից կորուստները մեկ հեկտարից կազմել են 129 կգ, որը կազմում է տվյալ տնտեսություններում ստացված հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության 6.4 %-ը:

Ըստ հետազոտության ամփոփ արդյունքների, հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում կորուստները կազմել են մոտ 26.0 հազար տոննա կամ ընթացիկ տարում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի 6.7%-ը: Արձանագրված կորուստների զգալի մասը, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում տեղի է ունեցել հացահատիկահավաք կոմբայնների ֆիզիկական մաշվածության պատճառով: